ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԿԱՏԱԼՈԳԻ ՇԱՊԻԿԸ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՄԱՆԸ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ Է ԱՍՈՒՄ ՎԻԵՆՆԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԿԱՐԴԻՆԱԼ ՔՐԻՍՏՈՖ ՇՅՈՆԲՈՐՆԸ

# «Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՆՁԵՐԸ» ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Ապրիլի 16-ին Կաթոլիկ Եկեղեցու Վիեննայի Արքեպիսկոպոսարանի թանգարանում բացվեց «Հայաստանի ոսկին» խորագրով ցուցահանդեսը, որտեղ ներկայացված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարաններում պահվող Հայոց Եկեղեցու ավանդական սրբություններից և հայ եկեղեցական արվեստի գործերից, այդ թվում և Մայր Աթոռի ձեռագրային հավաքածուից 67 ցուցանմուշ: Դրանց թվում են Նոյյան տապանի մասանց պահարանը, Ս. Թադեոս առաքյալի մասունքով աջը, Խոտակերաց Ս. Նշանը, Բագրատունյաց շրջանի Անին խորհրդանշող Աշոտ Երկաթ թագավորի խաչը և այլ ցուցանմուշներ:

Ցուցանմուշների ընտրության և ցուցահանդեսի կազմակերպման հայաստանյան բաժնի աշխատանքներն իրականացրել է Մայր Աթոռի վարչա-կազմակերպչական գործերի կառավարիչ և թանգարանների պատասխանատու վարիչ-տնօրեն Տ. Փառեն եպս. Ավետիքյանը:

Առաջին անգամ Մայր Աթոռի այս գանձերն արտերկրում ցուցադրվել են 1997 թ. Մոսկվայում՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի առիթով Կրեմլում կազմակերպված ցուցահանդեսում: Հետագայում նմանատիպ ցուցահանդեսներ կազմակերպվել են աշխարհի տարբեր երկրներում՝ Ֆինլանդիայում, Անգլիայում, Հունաստանում, Վատիկանում, Հոլանդիայում և այլուր:

Վիեննայում բացված ցուցահանդեսը կազմակերպվել է Արևելյան Եկեղեցիները, նրանց մշակույթն ու արվեստը արևմտյան աշխարհին ներկայացնող «Պրո Օրիենտե» կազմակերպության նախաձեռնությամբ: Վիեննայի համալսարանի պրոֆեսորներ տեր և տիկին Հելմուտ և Հայդե Բուշհաուզենների աշխատասիրությամբ հրատարակվել է նաև ցուցահանդեսի գունազարդ կատալոգը: Այն սկսվում է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Վիեննայի կարդինալ Քրիստոֆեր Շոյնբորնի ողջույնի խոսքերով (Վեհափառ Հայրապետի խոսքը տե՛ս էջ 10):

Կատալոգում ներկայացված ցուցանմուշների գունավոր լուսանկարներն ուղեկցվում են նրանց արվեստագիտական վերլուծությամբ: Կատալոգը պատմական տեղեկություններ է հաղորդում նաև Վիեննայի հայ համայնքի մասին: Քանի որ «Պրո Օրիենտե» կազմակերպության գլխավոր նպատակներից մեկը մշակույթի բնագավառում Արևմտյան և Արևելյան Եկեղեցիների համադրական ներկայացումն է նրանց միջև եղած ընդհանրությունների ու յուրահատկությունների վերհանմամբ, ուստի կազմակերպիչների գեղեցիկ մտահղացմամբ հայկական նյութը ցուցադրվում էր թանգարանի արևմտաեվրոպական արվեստի նմուշներին զուգահեռ: Շնորհիվ նման մոտեցման այցելուներին առավել ցայտուն կերպով են տեսանելի դառնում եկեղեցա-

կան երկու արվեստների պատկերագրությունը և ծիսաարարողական սպասքի ու հանդերձների կառուցվածքային և կոմպոզիցիոն բնորոշ գծերը:

Ցուցահանդեսի հանդիսավոր բացմանը ներկա էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, ավելի քան 300 մտավորականներ, արվեստագետներ ու ավստրիահայ գաղութի ներկայացուցիչներ: Գեղարվեստական հայտագրով ուղեկցվող հանդիսության ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկան Վիեննայի Արքեպիսկոպոս Քրիստոֆ Շյոնբորնը, Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը, Վիեննայի Արքեպիսկոպոսարանի թանգարանի տնօրեն Գերհարդ Էդերնդորֆերը և «Պրո Օրիենտեի» գործադիր քարտուղար Ֆիլիպ Հարնոնքորտը: Ցուցահանդեսում Մայր Աթոռը ներկայացնում էր Մայր Աթոռի Ձեռագրատան վարիչ և «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Վարդան Դևրիկյանը:

Ցուցահանդեսը կգործի մինչև հուլիսի 13-ը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*